Հավելված
ՀՀ կառավարության 2011 թվականի
նոյեմբերի 10-ի N 1582 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման աշխատանքների կազմակերպումը:

2. Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման գործընթացը՝ կախված ընդգրկման տարածքից, հետևանքների բնույթից և նշանակությունից, համապատասխանաբար կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի, Հայաստանի Հանրապետության մարզպետների ու համայնքների ղեկավարների որոշումներով ստեղծված և մշտական գործող հանձնաժողովների կողմից:

3. Գնահատման ու հաշվառման են ենթակա արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները:

4. Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները հաշվառվում են դրանց առաջացման պատճառների ուսումնասիրման ու վերացման, ինչպես նաև արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցման համար միջոցներ ձեռնարկելու նպատակով:

5. Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների ընդհանուր հաշվառումն իրականացնում են Հայաստանի Հանրա-

պետության արտակարգ իրավիճակների նախարարությունը, Հայաստանի Հանրապետության մարզպետարանները և տեղական ինքնակառավարման մարմինները, իսկ ըստ ուղղությունների՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան պետական կառավարման մարմինները:

6. Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման համար՝

1) կազմվում է վնասված գույքի ցանկը՝ նշելով դրանց տեսակը, գտնվելու վայրն ու համառոտ բնութագիրը.

2) ուսումնասիրվում և գնահատվում է վնասված գույքի վիճակը.

3) գնահատվում է գույքին պատճառված վնասի չափը:

7. Եթե արտակարգ իրավիճակների հետևանքով զոհվել են մարդիկ, կամ մարդկանց առողջությանը պատճառվել է վնաս, ապա Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Երևանի և մարզային փրկարարական վարչություններից դեպքի մասին տեղեկատվությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությանը և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը՝ համապատասխան միջոցառումներ իրականացնելու նպատակով:

8. Տեղեկատվությունը ներառում է՝

1) դեպքի օրը, ամիսը, տարեթիվը, ժամը և վայրը.

2) տուժողների ազգանունները, անունները, հայրանունները, նրանց ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, բնակության և աշխատանքի վայրերը.

3) դեպքի վայր մեկնած՝ փրկարարական աշխատանքներ իրականացնող խմբի (անձանց) կազմը (անձնական տվյալները).

4) դեպքը բնութագրող այլ հանգամանքներ՝ իրավիճակը, եղանակային պայմանները և այլն:

9. Հայաստանի Հանրապետության տարածքում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման նպատակով ստեղծվում են՝

1) հանրապետական հանձնաժողով (ստեղծվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ).

2) մարզային հանձնաժողովներ (ստեղծվում են Հայաստանի Հանրապետության մարզ-պետների որոշումներով).

3) համայնքային հանձնաժողովներ (ստեղծվում են Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների որոշումներով):

10. Հանրապետական, մարզային և համայնքային հանձնաժողովները գործում են հետևյալ ուղղություններով՝

1) գյուղատնտեսությանը հասցված վնասների գնահատում.

2) բնակչության գույքին հասցված վնասների գնահատում.

3) ենթակառուցվածքներին հասցված վնասների գնահատում.

4) բժշկասանիտարական հնարավոր վնասների գնահատում:

11. Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովների կազմում՝ ըստ ուղղություն-ների ընդգրկվում են արտակարգ իրավիճակների, առողջապահության, գյուղատնտեսու-թյան, կապի և տրանսպորտի, քաղաքաշինության բնագավառների մասնագետներ և մասնագիտացված կառույցների ներկայացուցիչներ, ովքեր պետք է ուսումնասիրեն, հաշվառեն և գնահատեն ստեղծված իրավիճակն ու հավանական վտանգները:

12. Ելնելով հանձնաժողովների աստիճանակարգությունից՝ համայնքային հանձնաժողովների կողմից կազմված ակտերը քննարկվում են մարզային հանձնաժողովում, և համաձայնեցված ակտերը ներկայացվում են հանրապետական հանձնաժողով: Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների մասին վերջնական տեղեկատվությունն ամփոփում և հրապարակում է արտակարգ իրավիճակների հետևանքով պատճառված վնասները գնահատող հանրապետական հանձնաժողովը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ